ապտիճան անբարոյական ընթացքով իւր կեանքը թշուառացնէ. արդար և խիստ ամօթ է մարդուն այսչափ հիւանդութեանց մէջ իյնալը, որ իւր անբարի վարուց ապացոյցն է. վասն զի բարի վարուց արդասիքն է առողջութիւնը։

Կ. Ե.

ՄՂԶԷՆ ՀԱՆԳՈՍՏԷՆ

Սարկաւագ Գրիգորի Սարգսեան ՍՐ 'Ի Թաչատ կեսարեայ։

Ա՛ՌՁ պատանի և անանէր ընդ հայրենեաց
աստեղաց,
Դախանձ առէր և 'ի սրտին փառաց տան Տեառն
անձկանաց։
Թողար զնայր մայր քաղաքաւեայ 'ի հասակին
եռանդուն։
Թողար 'ի բաց և զհայրենեաց զմիշտ դալար վայրս
քաղցրագոյն,
Գայր բնակութիւն ընտրէր անձին 'ի Սիոնի
յարկս անձուկ.
Ճանապարհ անջուր յերկրի վարժեալ անձամբ
զանձն փափուկ։
Զերկեամ՝ և եթ աշակերտեալ առ դասատուս
հայկաբան։
Ամենահեռեալ ամ մի ողջոյն դասախօսէր
քաջաբան։
Զոր ձիրս առեալ գովել աստեն։ խոհեմագոյն
'Ի յընթացս։
Ըզսէր գրաւէր մեծաց՝ քան զինքն։ ակնածելի՝ էր
մանկանց։
Քաջ ճանաչէր ըզչափ պայման. յոր աշխատէրն
փոյթ ուսեալ։
Եւ որ է 'Ի գովելիս։ անանախանձ միշտ ուսուցեալ։
Բոլորեցան մինչ երեք ամք։ ապա տան Տեառն
անձնուէր։
Սրտիւ բոլոր 'Ի յաստիճան Սարկաւագին հասանէր.
Զերմիւ պաշտէր ի կենդանագոյ զուսրբ Օրինաց
բուն պաշտօն.
Զառեալ անփոյթ ուսման երբեք։ ամենեւին
կնայր զգօն։
Մինչ այս մինչ այն յաւիտենին չափ ընտրէր
'Ի վերուստ։
Հրաման վերին անգառնալի մեզմիւ գոչէր
'Ի յերկնուստ.
« Օ՛ն արդ հանգիրՁ 'Ի ցաւոցդ յերանելեաց
'Ի կեան։
Զի կայ քո և աշխարհի հոգւոց բաղմաց
անսահման։ »
Առեալ ըզձայն երբ հրամանին։ ոչ գժկամակ։
այլ յօժար։
Եթէ զաշխարհս՝ ամենայնիւ՝ վերին կոչմանն հեզաբար
Հընազանդեալ։ 'Ի քաղաքորդ և հինգերորդ յամ
հասակին,
Եւ աւանդեաց զհոգին 'Ի կամս Էացուցչին
բնաւեց Էին։
Ընդ այս 'Ի խոր խոցի 'Ի սիրտ 'Ի ցաւոս իւր
սիրելին։
Բայց կամք Էին է այս օրհնեալ 'Ի սկզբանէ.
և հաստին։

1870 Հոկտ. 2 ՅԵՐՈՍՂԷՄ։

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Լադաքիոյ մեր Սրբ. Թղթակիցը յիշեալ քաղաքի Ռուսաց տերութեան հիւպատոսին յանկարծական մահը կը գուժէ մեզ հետեւեալ պարագաներով։ Ռուսաց Վեհ. Կայսեր անուանը տարեդարձին առջի օրը հրաւիրագրով մի խմբաց կուտայ տեղւոյն բոլոր հիւպատոսներուն և երեւելի քաղաքացւոց հետագայ աւուր տօնին ներկայ գըտնուելու, որու համար պատրաստութիւն տեսած էր։ Բայց դժբաղդաբար նոյն իրիկունը եկեղեցւոյ զանգակները իւր անակնուելի մահը գուժեցին, եւ հետեւեալ աւուր տօնական եւ ուրախական հանդէսը սգալի եւ յուղարկաւորութեան հանդէսի փոխուեցաւ։ Հանգուցեալ հիւպատոսը Իլիաս Մարկոս, ազգաւ յոյն էր, բայց բարեպաշտ և բարեսիրտ անձի ըլլալով՝ շատ պարագաներու մէջ յաւութիւններ ըրած է Հայոց ազգային գործերուն մէջ. վասն որոյ Լադաքիոյ եկեղեցւոյն տեսուչ Սրբ. Օ՛աքարիա վարդապետը ոչ միայն ներկայ գտնուած է յուղարկաւորութեան, այլ և 'Ի խնդրոյ յոյն կըղերին եւ հանգուցեալ հիւպատոսի որդւոյն Ռ՛ըրձիս Մարկոսին՝ իւր եկեղեցական շուրջառովը նորա հոգւոյն հանգստեան կարդացեր և մինչեւ 'Ի գերեզման երթալով հանգստեան շարականներ երգած է Սրբ. Թեանաս վարդապետի հետ, և մեծ պատուով ընդունուած է։ Ուրախ ենք մեք, նոյն պէս և տեղւոյն հայազգիք և բոլոր հասարակութիւնը, որ հանգուցեալ Իլիաս Մարկոսը իրեն արժանաւոր ժառանգ կը թողու իւր որդին Ռ՛ըրձիս Մարկոսը։

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Սուրբ Էջմիածնի մայր Աթոռոյն տպարանէն հրատարակուած ԱՐԱՐԱՏ անուն բանասիրական տետրին բաժանորդագրութիւնը մայիս 1 էն կ'բակսի։

Բաժանորդագինը Պոլսոյ համար 5 արծաթ մէճիտ է. իսկ գաւառաց համար 5 ու կէս, կանխիկ վճարելի։

Ամսեայ տետրակ առնել ուզողը, պէտք է ամէն մէկ տետրին չորս գահնկան վճարէ։

Պոլսոյ մէջ բաժանորդագրութեան տեղին է Մերձման թիւ 29, և Գ. Ի. ըրձի խան վերի յարկ թիւ 45 Մարգարեան և Սրտոյեան ընկերաց գրատուները։

digitised by A.R.A.R.@